ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 11.05.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԷՍ-2018/28

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը՝ (այսուհետ՝ նաև Խորհուրդ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 19.03.2018թ. թիվ 03/26-3/4971-18 գրությամբ «Գալիմա» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 00128415) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. <u>**ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.**</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 16.03.2018թ. թիվ 01/61-5736 գրության հիման վրա, 19.03.2018թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «Գալիմա» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

ՀՀ ֆինանսների նախարարությունը պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

2. <u>Երևանի քաղաքապետարանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Երևանի քաղաքապետարանը 16.03.2018թ. թիվ 01/61-5736 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի և «Գալիմա» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 28.12.2017թ. կնքված «ԵՔ–ԲՄԱՊՁԲ–18/1-10» ծածկագրով սննդամթերքի մատակարարման գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) Ընկերությունը ստանձնել է հացի մատակարարման պարտավորությունը:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է նույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում Գնորդին մատակարարել պայմանագրի N 1.1, N 1.2 հավելվածներով՝ Տեխնիկական բնութագրերով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.4.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներում, ժամկետներում և հասցեով»:

Պայմանագրի 2.4.2 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավոր է ապահովել ապրանքի մատակարարումը Պայմանագրի 2.1.2 կետի «բ» ենթակետի և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

Պայմանագրի 2.4.5 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել Պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր»:

Տեղեկացնում եմ, որ Ընկերությունը պատշաճ ձևով չի կատարել պայմանագրային պարտավորությունները, այն է՝ հաճախակի խախտել է պայմանագրով սահմանված

ապրանքի մատակարարման ժամկետը, ինչպես նաև մատակարարված հացը շատ դեպքերում չի համապատասխանել տեխնիկական բնութագրով նախատեսված պայմաններին, որի մասին Ընկերությանը բազմիցս զգուշացվել է էլ. հասցեին համապատասխան գրություններ ուղարկելու միջոցով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն, այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Պայմանագրի 2.1.7.1 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը: Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել գնորդի համար ընդունելի ժամկետում:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Վերոգրյալով պայմանավորված և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Ընկերությունը փաստացի չի կատարել պայմանագրով ստանձնած պարտավորությունները՝ Երևանի քաղաքապետարանը միակողմանի հրաժարվել է կնքված ապրանքի մատակարարման գնման պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն միակողմանի լուծված»:

Խորհրդի նիստերին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Արծրուն Վարդանյանը:

3. «Գալիմա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Գալիմա» ՍՊԸ-ն Խորհրդին ուղղված 22.03.2018թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի և «Գալիմա» ՍՊԸ-ի միջև 28.12.2017թ.կնքված «ԵՔ–ԲՄԱՊՁԲ–18/1-10» ծածկագրով պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) կնքվել է ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Գ. Չթրյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 01.04.2018թ. թիվ 956-Ա որոշման հիման վրա: Երևանի քաղաքապետի 01.04.2015թ. թիվ 956-Ա որոշումը ընդունված է հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը, ՀՀ կառավարության 2015թ. հունվարի 30-ի N 105-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 7-րդ կետի 1-ին ենթակետի «ա» և «բ» պարբերությունները և 8-րդ կետի 2-րդ ենթակետը:

Երևանի քաղաքապետի 01.04.2018թ. թիվ 956-Ա որոշման հիման վրա Երևանի քաղաքապետարանի գնումների վարչության պետը որպես գնումների համակարգող չէր կարող կազմակերպել գնման գործընթաց՝ հաշվի առնելով, որ «Գնումների մասին» ՀՀ 2010թ. դեկտեմբերի 22-ի ՀՕ-206-Ն օրենքը ուժը կորցրել է «Գնումների մասին» ՀՀ 2016թ. դեկտեմբերի 16-ի ՀՕ-21-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 25.04.2017թ.), որի համաձայն պատվիրատուի ղեկավարի կողմից գնումների համակարգող սահմանելու իրավասության կետը հանդիսանում է օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը, ինչպես նաև ՀՀ կառավարության 2015թ. հունվարի 30-ի N 105-Ն որոշմամբ փոփոխվել է ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 10-ի N 168-Ն որոշման N1 հավելվածով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգը և ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 10-ի N 168-Ն որոշումը:

Կենտրոնացված կարգով գնման գործընթացը կարող էր կազմակերպվել ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման N 1 հավելվածով հաստատված

«Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 101-ից 104-րդ կետերի համաձայն: Նշված կարգի 104-րդ կետի համաձայն՝ կենտրոնացված կարգով գնումների կազմակերպումը, պայմանագրերի կնքումը, պայմանագրերի արդյունքների ընդունումը և դրանց դիմաց վճարումների կատարումն իրականացվում է նույն կարգով սահմանված պահանջներին համապատասխան, հաշվի առնելով, որ յուրաքանչյուր կազմակերպության կարիքի բավարարման համար ընտրված մասնակցի հետ վերադաս պատվիրատուն կնքում է առանձին պայմանագիր, որով պատվիրատուի իրավունքների և պարտականությունների իրականացումը վերապահվում է տվյալ կազմակերպությանը:

Պայմանագրի 8.13 կետի համաձայն՝ պայմանագրով նախատեսված գնորդի իրավունքներն ու պարտականությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է գնման ժամանակացույցում նշված յուրաքանչյուր մանկապարտեզ իր մասով:

Սակայն յուրաքանչյուր կազմակերպության կարիքի բավարարման համար պայմանագիրը չի կնքվել առանձին, ինչպես նաև Պայմանագրի շրջանակներում ֆինասնսական միջոցներ նախատեսվելուց հետո համաձայնագիրը պետք է կնքվեր, ինչպես նաև անհրաժեշտ հիմքերի առկայության դեպքում պայմանագիրը պետք է լուծվեր համապատասխան մանկապարտեզի կողմից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետի և Պայմանագրի 8.9 կետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Սակայն պայմանագրի միակողմանի լուծելու մասին ծանուցումը չի հրապարակվել տեղեկագրում, այսինքն, Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ «Գալիմա» ՍՊԸ-ն պատշաճ չի ծանուցվել:

Միաժամանակ տեղեկացվում է, որ 08.01.2018թ.-ից մինչև 15.03.2018թ. ընկած ժամանակահատվածում «Գալիմա» ՍՊԸ-ի կողմից Պայմանագրով նախատեսված ապրանքները մատակարարվել են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին համապատասխան, ինչի մասին փաստում են երկկողմանի հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունները, ինչպես նաև տեղեկացվում է նաև, որ Պայմանագրի թիվ 1.1 և թիվ 1.2 հավելվածներով սահմանված է, որ մատակարարման կոնկրետ օրը որոշվում է մանկապարտեզների կողմից նախնական (ոչ շուտ քան 3 աշխատանքային օր առաջ) պատվերի միջոցով՝ էլ. փոստով կամ հեռախոսազանգով, սակայն Երևանի քաղաքապետարանի 14.03.2018թ. թիվ 61/386 գրությունը ստանալուց հետո «Գալիմա» ՍՊԸ-ին Պայմանագրի թիվ 1.2 հավելվածով նախատեսված մանկապարտեզների կողմից չեն ներկայացվել համապատասխան պատվերներ, ինչի հետևանքով «Գալիմա» ՍՊԸ-ն կրել է վնասներ: «Գալիմա» ՍՊԸ-ի ներկայացուցիչը հեռախոսազանգեր է կատարել մանկապարտեզներ՝ պարզելու համար պատվերների բացակայության պատճառների և մանկապարտեզների տնօրեններից ստացել պատասխաններ, որ «Գալիմա» ՍՊԸ-ի հետ Պայմանագիրը լուծված է»:

Խորհրդում կայացած նիստերին մասնակցում էր «Գալիմա» ՍՊԸ-ի փոխտնօրեն Դավիթ Հովհաննիսյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/28 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուրդն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 19.03.2018թ. թիվ 03/26-3/4971-18 գրությունը և կից փաստաթղթերը, Երևանի քաղաքապետարանի 16.03.2018թ. թիվ 01/61-5736 գրությունը, Երևանի քաղաքապետարանի և «Գալիմա» ՍՊԸ-ի միջև 28.12.2017թ. կնքված «ԵՔ–ԲՄԱՊՁԲ–18/1-10» ծածկագրով սննդամթերքի մատակարարման գնման պայմանագիրը, «Գալիմա» ՍՊԸ-ի Խորհրդին ուղղված 22.03.2018թ. գրությամբ հայտնած դիրքորոշումը, Երևանի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարին ուղղված Երևանի քաղաքապետարանի N98, N99, N105, N106, N107, N108, N109, N100, N111, N112, N113, N116, N117, N118, N119 մանկապարտեզներ ՀՈԱԿ-ների

01.03.2018թ. գրությունների պատճենները, «Գալիմա» ՍՊԸ-ի կողմից մատակարարված ապրանքի վերաբերյալ նույն ՀՈԱԿ-ների կողմից կազմված արձանագրությունների պատճենները.

Երևանի քաղաքապետարանի և «Գալիմա» ՍՊԸ-ի միջև 28.12.2017թ. կնքվել է «ԵՔ–ԲՄԱՊՁԲ–18/1-10» ծածկագրով սննդամթերքի մատակարարման գնման պայմանագիրը (այսուհետ՝ նաև Պայմանագիր):

Պայմանագրի՝

• 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է նույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում Գնորդին մատակարարել պայմանագրի N 1.1, N1.2 հավելվածներով՝ Տեխնիկական բնութագրերով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

• 2.1.2 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի, եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով ապնպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը(...).

• 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

• 2.1.7.1 կետի «ա» ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել գնորդի համար ընդունելի ժամկետում:

• 5.2 կետի համաձայն՝ Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության

ստորագրությամբ, իսկ Պայմանագրի արդյունքը գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

• 5.3 կետի համաձայն՝ հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

• 5.4 կետի համաձայն՝ Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 3 օրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

• 8.9 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերի միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը նույն կետով սահմանված կարգով հրապարակվելուն հաջորդող օրվանից:

• 8.13 կետի համաձայն՝ պայմանագրով նախատեսված գնորդի իրավունքներն ու պարտականությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է գնման ժամանակացույցում նշված յուրաքանչյուր մանկապարտեզ իր մասով:

Պայամանգրի N 1.1 հավելվածով նախատեսված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2018թ. դեկտեմբերի վերջին աշխատանքային օրը ներառյալ Երևան քաղաքի N98, N99, N105, N106, N107, N108, N109, N100, N111, N112, N113, N116,

N117, N118, N119, N120 և N141 մանկապարտեզներին մատակարարել հաց՝ հետևյալ տեխնիկական հատկանիշներով. «Տեսակը՝ «մատնաքաշ» կամ «Հրազդան», ցորենի բարձր տեսակի ալյուրից պատրաստված, ՀՍՏ 31 99: Փաթեթավորումը՝ թղթե տոպրակով կամ սննդի համար նախատեսված պոլիէթիլենային թաղանթով՝ համապատասխան մակնշումով: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի: Պիտանելիության մնացորդային ժամկետը՝ ոչ պակաս քան 90%:

Նույն Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է նաև, որ.

- մատակարարման կոնկրետ օրը որոշվում է մանկապարտեզների կողմից նախնական (ոչ շուտ քան 3 աշխատանքային օր առաջ) պատվերի միջոցով՝ էլ. փոստով կամ հեռախոսազանգով:

- մատակարարումը պետք է իրականացվի տվյալ սննդամթերքի տեղափոխման համար նախատեսված տրանսպորտային միջոցներով, որոնք(...) պետք է ունենան սանիտարական անձնագրեր:

Երևանի քաղաքապետարանի N98, N99, N105, N106, N107, N108, N109, N100, N111, N112, N113, N116, N117, N118, N119 մանկապարտեզների տնօրենները 01.03.2018թ. դիմել են Երևանի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարին՝ գրեթե նույն բովանդակություն ունեցող գրություններով՝ հայտնելով, որ «Գալիմա» ՍՊԸ-ի կողմից մատակարարված հացը չի համապատասխանում Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրին և սանիտարական նորմերին: Տնօրենների գրություններում բարձրացված դժգոհությունները վերաբերել են հացի որակական հատկանիշների պայմանագրով նախատեսված բնութագրին անհամապատասխանությանը, մասնավորապես, նշվել են ապրանքի այնպիսի թերություններ, ինչպիսիք են՝ հացի թերեփվածությունը կամ այրավածությունը, հացին ոչ բնորոշ համային հատկանիշները և հոտը, նշվել են նաև հացի փաթեթավորմանը և մատակարարման սանիտարական պայմաններին վերաբերող թերություններ (առանց պոլիէթիլենային տոպրակների, կեղտոտ արկղերով մատակարարման դեպքեր, սանիտարական գրքույկի բացակայությունը, և այլն): Միաժամանակ, մանկապարտեզների տնօրենները հայտնել են, որ բազմիցս բանավոր

կարգով զգուշացրել են մատակարարին վերը նշված թերությունների մասին և հորդորել վերացնել դրանք, սակայն մատակարարի կողմից իրավճակը որևէ կերպ չի շտկվել:

Վերոգրյալով պայմանավորված և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Ընկերությունը փաստացի չի կատարել պայմանագրով ստանձնած պարտավորությունները՝ Երևանի քաղաքապետարանը միակողմանի հրաժարվել է կնքված ապրանքի մատակարարման գնման պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն միակողմանի լուծված»:

Պատվիրատուն Խորհրդին ներկայացրեց նաև մանկապարտեզների համապատասխան պաշտոնատար անձանց կողմից կազմված արձանագրությունները՝ հացի մատակարարման հետ կապված խախտումների նկարագրություններով և մատակարարված հացի տարաների և փոխադրամիջոցների համապատասխան լուսանկարներով:

Պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով կայացած նիստին ներկա մանկապարտեզների ներկայացուցիչները Խորհրդին ներկայացրին Ընկերության կողմից մատակարարված ապրանքի վերաբերյալ գրեթե նույնաբովանդակ դժգոհություններ ու բողոքներ:

Խորհրդի այն հարցին, թե ի՞նչ գործողությունների են դիմել ոչ պատշաճ որակի հացը ստանալուց հետո, մանկապարտեզների ներկայացուցիչները պատասխանեցին, որ հացը ստացել են՝ ստորագրելով ապրանքի հանձնման-ընդունման արձանագրությունները, այնուհետև, հայտնաբերելով վերը նշված թերությունները՝ խոտանել են այն:

Ընկերության ներկայացուցիչը պնդեց 22.03.2018թ. Խորհրդին ուղղված գրությամբ ներկայացված դիրքորոշումը և տեղեկացրեց, որ 08.01.2018թ.-ից մինչև 15.03.2018թ. ընկած ժամանակահատվածում «Գալիմա» ՍՊԸ-ի կողմից Պայմանագրով նախատեսված ապրանքները մատակարարվել են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին համապատասխան, ինչի մասին փաստում են «Գալիմա» ՍՊԸ-ի և ՀՈԱԿ-ների միջև կազմված և երկկողմանի հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունները, ինչպես նաև նշեց այն հանգամանքը, որ մատակարարված ապրանքը չընդունելու որևէ պատճառաբանված մերժում այդ ժամանակահատվածում մանկապարտեզների կողմից չի եղել, իսկ լուսանկարների վրա

պատկերված տրանսպորտային միջոցները Ընկերությանը չեն պատկանում: Ընկերության ներկայացուցիչը Խորհրդի ուշադրությունը հրավիրեց նաև այն փաստին, որ Պայմանագրով սահմանված է, որ մատակարարման կոնկրետ օրը որոշվել է մանկապարտեզների կողմից նախնական (ոչ շուտ քան 3 աշխատանքային օր առաջ) պատվերի միջոցով՝ էլ. փոստով կամ հեռախոսազանգով, սակայն 14.03.2018թ.-ից հետո «Գալիմա» ՍՊԸ-ին մանկապարտեզների կողմից համապատասխան պատվերներ չեն ներկայացվել, ինչի հետևանքով «Գալիմա» ՍՊԸ-ն կրել է վնասներ: «Գալիմա» ՍՊԸ-ի ներկայացուցիչն ընգծեց, որ Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ Ընկերությունը պատշաճ ծանուցված չի եղել, քանի որ Պատվիրատուի կողմից համապատասխան հայտարարությունը տեղեկագրում չի հրապարակվել, և միայն պատվերների բացակայության պատճառը պարզելու նպատակով մանկապարտեզներին հեռախոսազանգեր կատարելով՝ տեղեկացել է, որ Երևանի քաղաքապետարանի կողմից Պայմանագիրը միակողմանի լուծվել է:

Պաշտոնական ընթացակարգի քննության շրջանակներում Ընկերությունը Խորհրդին ներկայացրեց հացի տեղափոխման համար նախատեսված տրանսպորտային միջոցների սանիտարական անձնագրերի (NAA000261, վավեր է մինչև 12.10.2018թ. և NAA000184, վավեր է մինչև 11.09.2018թ.), ինչպես նաև համապատասխան աշխատակիցների անձնական սանիտարական (բժշկական) գրքույկների պատճենները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 6-րդ հոդվածի՝

•1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

•2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ.

-Ընկերությունը մատակարարված հացը Պատվիրատուի կողմից չընդունելու վերաբերյալ որևէ գրավոր պատճառաբանված մերժում չի ստացել:

-Ընկերության կողմից «ԵՔ–ԲՄԱՊՁԲ–18/1-10» ծածկագրով սննդամթերքի մատակարարման գնման պայմանագրի շրջանակներում մատակարարված հացն ընդունվել է մանկապարտեզների կողմից և վերջիններիս և Ընկերության միջև ստորագրվել են հանձնման-ընդունման արձանագրություններ:

-Ընկերության մոտ առկա են եղել հացի տեղափոխման համար նախատեսված տրանսպորտային միջոցների սանիտարական անձնագրերը և համապատասխան աշխատակիցների անձնական սանիտարական (բժշկական) գրքույկները, այսինքն,

Ընկերության կողմից պահպանվել են հացի մատակարարման՝ Պայմանագրով նախատեսված սանիտարական նորմերը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ Պատվիրատուն «Գալիմա» ՍՊԸ-ի հետ 28.12.2017թ. կնքված «ԵՔ–ԲՄԱՊՁԲ–18/1-10» ծածկագրով գնման պայմանագիրը միակողմանի լուծելու մասին որոշում ընդունելով՝ գործել է ոչ իրավաչափ և խախտել է Պայմանագրի 2.1.7 կետով սահմանված պահանջները:

Խորհուրդը գտնում է նաև, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում «Գալիմա» ՍՊԸ-ին ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 19.03.2018թ. թիվ 03/26-3/4971-18 գրությամբ «Գալիմա» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 00128415) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ